

Տան վարժ 4876 թ. համար, ուր		
զետեղվում է դպրոցն . . . . .	439	96
Վայելելափայտի համար . . . . .	54	50
Չեռագործութեան թեթի և դանազան		
մանրամասն ծախը . . . . .	55	52
Գումարն է	842	52
Մուտք 5044 44		
Նախք 842 52		
Մինց դանձապահի մօտ 2204 92		

Դաշտական է - Նորաց Բէջ - Անդ Հայութ - Անդիշեց:

Ա. Դաստութ. — Սորա մէջ աւանդվում են կրօն — Հին եւ Նոր Կտակարանից. Քերականութեան սկզբունք առանց ծեռնարկի. Հայոց Պատմութիւն, եւ լեզու, Ա. Խեղու. Թուարանութիւն. Ազգ. եւ Եկեղ. Երգացողութիւն. Հ. եւ Ա. վայելազրութիւն եւ ծեռագործութիւն: Սորա մէջ դանդում են 5 Ռւսուցիչ, 16 Թոշակաւորք, եւ երկրու ծրիաթոշակը, ընդ ամենը 18: Նախապատրաստական դաստութ. — Սորա մէջ աւանդվում են Հայոց լեզու, Ա. Խեղու. Հ. եւ Ա. վայելազրութիւն, Երգացողութիւն եւ Չեռագործութիւն. Սորա մէջ դանդում են, 4 Ռւս. 29 Թօշակաւորք եւ 8 ծրիաթոշակը. ընդամենը 37:

## Ենթակա Ենդաման:

1. Կարապիտ Քալանթարեանց. 2. Սամուէլ Բաղրեանց. 3. Մովսէս Աշուղեանց. 4. Յովհաննէս Միրզարէկեանց. 5. Աբրահամ Գասպարեանց. 6. Յովհաննէս Խալափեանց. 7. Խաչատուր թէկ. Եղիազարեանց:

## Տարբեկան Ենդաման:

1. Անդրէաս Արքապիսկոպոս. 2. Սահակ Վարդապետ. 3. Պետրոս թէկ Տէր Մարկոսեանց. 4. Միքայէլ Ղարաբաշեանց. 5. Պողոս Ներսէսեանց. 6. Գրիգոր Գիլտարեանց. 7. Գէորգ Կամականեանց. 8. Յարութիւն Տէր - Ետայեանց. 9. Հայրապետ Դուկասեանց. 10. Յովհաննէս Խըրաշեանց. 11. Զաւատ Տէր - Ստեփանեանց. 12. Յարութիւն Տէր - Մարզականց. 13. Աստուածատուր Զափարեանց.

14. Բաղրամար Նազարեանց. 15. Ներսէս Տէր - Ներսէսեանց. 16. Պետրոս Գէշիշ - օղլի. 17. Պահակ թէկ Սերեբրակինեանց. 18. Պաւել Շեմիրեան Մելիք - Բէղլարեանց. 19. Յովսէփ Մելիք - Բէղլարեանց. 20. Գրիգոր Ալվագեանց. 21. Գէորգ Միքարէկեանց. 22. Թովմաս Ամիրեանց. 23. Գէորգի Խանին Տէր Յարութիւնեանց. 24. Զնանկիլի Միրզարէկեանց. 25. Թաղէտոս Քահ. Բուհաղեանց. 26. Յակով թէկ Նիկիտեանց. 27. Բժիշկ Ամբրեանց:

## Խնամակալութեան:

1. Մարգարիտ Զօնրապեանց. 2. Ոսկի Կամկաճեանց. 3. Թագուհի Նազարեանց. 4. Խանում Խալափիեանց. 5. Կատարինէ Ներսէսեանց. 6. Մարիամ Նիկիտեանց. 7. Զամբաղ Քալանթարեանց. 8. Մարիամ Խըրաշեանց. 9. Մարգարիտ Ավշարեանց. 10. Մարիամ Աշուղեանց. 11. Մարիամ Տէր Մարկոսեանց. 12. Խանում Լազարեանց. 13. Ովսաննա Եղիազարեանց. 14. Մարիամ Լալայեանց. 15. Զարվարդ Լալայեանց. 16. Զարվարդ Գէօքայեանց. 17. Կատարինէ Միրզայեանց. 18. Ոսկի Սերեբրակինեանց. 19. Սոֆիա Ստեփանեանց. 20. Եղիսաբէթ Ամիրեանց. եւ 21. Մարիամ Բուհաղեանց:

Հոգաբարձուց Յովհաննէս Խալափիեանց  
Յովհաննէս Միրզարէկեանց

Ե 20 Ապրիլ 1877 ա.դ.

## Համակալ:

## ԱխԱԼՔԱԼԱԸ-ՔԷՆ.

## ԽԱՀԱԴՐԵՐԵ-ԵՒԱՆ ԱՐՄԱԴՐԱՅ.

Մեր կողմերը արմատացած այն վատ սովորութիւնը որը գիւղականները աղջիկ մը նշանելու ատեն պահանջում են խատիւ նշանադրութղ տղայից հոգեւունք անուանուած այն ծանր հարկը որոյ մասին առաջին տարիներում Արարատիկ միջոցաւ բաղդ ունեցանք մեք խօսելու և յայտնեցնք դորանց յառաջ եկած այն վատ շետև անդները. այժմ դարձեալ մեք բաղդ ունե-

ցանք ուրախութեամբ սրտի յայտնել այս նա-  
մակաւա՞ որ վաղուց չէ, որ այս կողմերն ևս ըս-  
տացվեցաւ Նորին Աեհափառութեան Գեղրդ  
ազգախնամ Կաթուղիկոսի այս պակասութեանց  
բարեկարգութեան մասին տնօրինած և սահմա-  
նած կանոնադրութիւնքը և սուրբ Առնդակը, այս  
մասին մեծ Համակրութիւն և շատ ու շատ զո-  
հունակութիւնք են լսվում մեր ստհմանի ընա-  
կիչներից: Նորին Աեհ Օծութեան այդ իմաս-  
տալից Առնդակից եւ Նշանադրութեան մասին  
սահմանուած գեղեցիկ կարգադրութիւնից երե-  
ւում է որ Հասարակաց Հայրը Նուրբ Հեռա-  
տեսութեամբ և Խորին կերպով ըմբռնելով իւր  
ինամոց յանձնեալ հօտի գրութիւնն և վիճակը  
շատ խոհական, յարմարաւոր և մեր խեղճ ժո-  
ղովրդոց օգտակար կանոնադրութիւնք բարեկար-  
գել և սահմանել է իւր բազմազբաղ և ծանրա-  
կշիռ գործերու մեջ անդամ չինայիլով իւր ան-  
դին ժամերը Հասարակաց օգտին նուիրելու:

Սեր ազգը կարող է ներկայումս պարծիր որ  
ունի գալուս համապատասխան հասարակաց բա-  
րօրութեան, Եկեղեցեաց բարեկարգութեան հա-  
մար աշխատող, ուսումնարանաց շնութեան և  
ծաղկման համար անձանձիր տքնող ճգնող մի  
ազգաշխ Կալմուղեկոս որոյ ազգային մեծագոր-  
ծութիւնքը իւր անուանը փառք և իւր ազգին  
յաւիտնական պարծանք պիտոյ է յինին:

Ախոսլքաղաքայ և Ծալիկայի նահանգաց գործակատար համբաւ հանգուցեալ համբաւաւոր Ստեփանոս Ա. Ք. Դէմուրջողականցի տեղ նշանակու եցաւ այժմ Ախոսլքաղաքի և Ծալիկայի վիճակաց հոգեւոր գործոց վերատեսուչ բարեկրօն Եղիշէ Քահանայ Տէր Վազգարեանցը որը մի բարեշնորհ արիածան գործունեայ և հասկացող հոգեւորական է և հմատ հայկաբան այս արժանավայել ընտրութեան համար առհանարակ թէ քաղաքացիք և թէ գիւղական բնակիչք շատ զոհ են, և ուրախ և մեծացոյն են, որ շնորհիւ մեր նոր առաջնորդ Գերազապիւ Գարբրիէլ Ա. Արքեպիսկոպոս Այվաղեանցի և նորա փոխանորդ Գեր. Գրիգոր Արքեպիսկոպոս Սագինեանցի շատ խոհական

և արժանավոյել կարդաղրութիւնք և օգտաէա  
բարեկարգութիւնք լինելու են և գործադրվելու,  
գործադրվելու եմ ասում, վասն զի շատ անդամ,  
ինչպէս փորձը մեզ ցցց տված է սահմանեալ  
շատ բարեկարգութիւնք մնում են առանց գործադրութեան շնորհիւ շահամոլ, տղէտ և անընդունակ գործակատարների, թէեւ այդպիսիները  
զիտէին պաշտօնական գործոց մէջ այնպէս ցցց  
տալ, որ ոչինչ զանցառութիւն չերևէր:

Ճշմարտութեմինը՝ պահանջումէ յիշել, որ  
Բարեկարգութեան Եղիշէ քահանայ Տէր Ղազարեանցը  
— իւր արդիւնաւոր անդրանիկ ուսուցչութեամ-  
բը առաջինն եղաւ՝ որ տարածեց այս կողմերը  
Ախլազակի և Նորա վիճակի մէջ ուսումնասի-  
րութեան սերմը շատ դժուարութեանց և նա-  
խափաշարժանց յաղթելով. Նորանից առաջ այս  
մէր կողմերում հայերէն գրել և կարգադիտա-  
ցող և հասկացողներին մատով էին ցցց տալիս,  
ուսուցիչ մը գտնելը շատ հազուագիւտ էր: Եղի-  
շէ քահանայի ջերմ աշխատութեան շնորհիւն է  
որ այժմ գտնվում է քիչ թէ շատ Ախլա-  
զակում ուսման ճաշակը առած երիտասարդներ  
ընթերցաւէր պատանիները մէր ուսումնարանները  
կառավարող ուսուցիչներ և զիւղերում մի քանի  
յարգելի քահանաները Նորա աշակերտներէն են:

Ացեալ ամիսներում վիճակիս զի՞ն ղերից 7 քա-  
հանայացու տիրացուներ, որք այս տեղի ձայնա-  
գրութեան ուսուցիչ Կարբեցի Պ. Կարապետ Տէր  
Յովսկիմեանցի մօտ եկեղեցական ձայնագրութիւ-  
նը սովորում էին և այդ արուեստը աւարտելով  
նորանից վկայական առած էին, կանչվեցան Թիֆ-  
լիզի Թեմական Ատենից հարցաքննութիւն տալու-  
ընդհանրապէս ուր ձայնագրութիւնից ևս քննվե-  
լով զովելի յառաջադիմութիւն էին ցոց տուած-  
ձայնագրութիւնից. այժմ ևս միշեալ ուսուցիչը  
աշխատում է կատարելագործելու 7 տիրացու-  
ներ ևս:

ԿՈՐԱՎԵՏ Տ. Ա. ՄՈՐԴՈՒՐԵԱՆ.